

Մ Ե Ր

ՄՏԵՐԻՄ ԺՈՂՈՎԱՐԳԵԱՆ

Շաբաթը երկու անգամ
կը հրատարակուի :
Ստորագրութեան տեղն
է Իմամ Ալի խան վա-
րի յարկը թիւ 15 :



Տարեկան գինն է կանխիկ
ըրուշ 100 :
Գուրսերէն բաժանորդ
էզոյները փոստային
ծախքը վճարելու են :

25 ԱՊՐԻԼ

Գ. ՏԱՐԻ 1863

ԹԻԻ 9

ԵՄԷ ՄԱՐԴԷՆ

ԲՆՏԱՆԵՍՅ ՄԱՅՐԵՐՈՒ ԴՍՍԻՍՐԱԿՈՒ
ԹԻԻՆԸ

Տես թիւ 7, 8 .

Գ Լ . Է .

Աշխարհի գաստիարակոմիտի-նն ըստ Յերեայ
ն ըստ Յէնէլիի :

Պատճառ չեմ տեսներ թէ ինչու հա-
մար կանանց այնչափ խնամ չը տարուի .
ինչու համար ճշմարտութիւնը նախա-
պաշարմանց կերպարանքով , պարտաւ-
րութիւնը մնապաշտութեան կեղծեօք ,
ցուցուի անոնց : Կանայք ալ իրենց պար-
տաւորութիւնները ճանչնալու , և ճշմար-
տութիւնը դիտնալու իրաւունք ունին ,
քանզի երկուքին ալ պատշաճ և բաւա-
կան են : (Մատամ տը թէմիւզա Գաս-
տիարակոմիտի-ն կանանց : էջ 33 .)

Կին մը ժողովուրդը կը յարուցանէ ,
թագաւորները կը վառէ , Մազարէն Փա-
րիզէն կը հալածէ . ուրիշ կին մը Պաս-
դիլլէն թնդանօթ արձակել կուտայ թա-
գաւորին դէմ , որ Մեծին Գոնտէի փա-
խստէն ետքը մինակ իր անպարանքը կընայ

դառնալ . Լուսովիկոս ԺԳԻ . դարն այս-
պէս կը սկսի : Քանի մը տարի կանցնի ,
մանուկ թագաւորը կը տեսնուի իր նա-
խարարաց մեծապայծառ ակումբին մէջ՝
որոց անունները պատմութեան մէջ
հռչակաւոր են : Բայց տօներու փառա-
ւորութեանն ու պատերազմի շնուեան
մէջ՝ կանանց իշխանութիւնը կը տուէ . ուր
մեծամեծ ասպետներ , մեծամեծ զորա-
վարք , մեծամեծ պաշտօնեայք ոչ այլ ինչ
են թէ ոչ թագաւորին սպասաճարկու-
ները . Քագաւորն իր յաղթութիւննե-
րովը միանգամայն իբրև տարփաւոր և
համանի բոլոր Եւրոպա կը դրուէ , և
չլացեալն Եւրոպա իր դարը մարդկային
մտաց պատմութեանը չորս փառաւոր
ժամանակներուն մէկը կը կոչէ : Ան ա-
տեն յանկարծ կը լսուի աղաչաւոր ձայն
մը՝ որ կանանց համար քիչ մը դժութիւն
կը հայցէ . կանանց համար՝ որոնք ար-
դարև երկրին (Գազղիոյ) բախտին վրայ
իշխան էին . բայց անոնց այսչափ սքան-
չելեացը մէջ՝ անոնց գաստիարակութիւ-
նը բնաւ մոռցուած էր : Ի՞նչ զարմանք ,
և ի՞նչ թշուառութիւն . անպաճոյճ ե-
կեղեցական մը , թէպէտ կատկածելով
թէ իր կարծիքն իբրև տարտապարտ սիտի

բանաստօրի , հետեւեալ վարդապետու-
 թիւնը կը քարոզէ : « Աղջկունք բրիստո-
 նեական վարդապետութենէ , կարէ , եր-
 դելէ , կաքաւել , հաղուելէ , աղնուա-
 կան կերպով խօսելէ և աղէկ խոնարհու-
 թիւն ընելէ զատ ուրիշ բաներ ալ պար-
 տին ուսանիլ : » Եւ ինչ էր աս նոր հրա-
 հանգութիւնը որ Սէվինեէի , Գուլանժ
 և Լա Ֆայէդի դարը կրնար դայթակղե-
 ցնել : Աս նոր հրահանգութիւնն էր ,
 կարգալ , գրել և համարել (թուել)
 գիտնալ . ընկերական գործերու բաւա-
 կան հմուտ ըլլալ , և հիւանդներ խնամե-
 լու համար բժշկութեան տեղեկանալ :
 Ահա ասոնք են զոր յարգին Ֆիւրի կու-
 ղէր որ կանայք խոնարհութիւն ընելու
 տաղանդին վրայ յաւելուն : Բայց կանայք
 տակաւին հրաման չունէին փափաքե-
 լու բանաստեղծութեան , փիլիսոփայու-
 թեան , պատմութեան , բարոյականի , և
 ուրիշ անոնց նմաններուն՝ որոնք կրնան
 մարդուս աւագ խորհուրդներ ազգել , սիր-
 ար լուսաւորել , անձը բարձրացնել . կը
 կարծուէր թէ ան ամեն բաները կա-
 նանց համար չեն , կամ թէ անոնց
 անապարձ ունայնութեանը ճարակ կու-
 տայ : Բայց և այնպէս Ֆիւրի իր մեծ դա-
 բուն ան դուզնաբեայ շնորհումն ըրած ա-
 տենը , իբր յանկարծական լուսէ մը
 զարնուելով ըսաւ , « Այուրի որ կանայք
 ուսման կարող չըլլան , որպէս թէ անոնց
 հոգին այլ աղջ է քան էրիկ մարդոց հո-
 գին . որպէս թէ անոնք ալ մեզի պէս ի-
 րենց բանաւորութիւնն ուղղելու , իրենց
 կամբին կանոն դնելու , իրենց կիրքերուն
 հետ կուտելու կարօտ չեն . կամ որպէս
 թէ իրենց աս բոլոր պարտաւորութիւն-
 ները , առանց բան մը սորվելու , կատա-
 րել՝ անոնց աւելի դիւրին է քան մեզ :

Աս կրօնական ձայնին վաղվազակի
 ուրիշ գրեթէ աստուածային ձայն մը յա-
 բեցաւ : Ֆէնէյօն իր քահանայութեանն
 ոտքի տասը տարիները նոր կաթողիկէայց
 (քաթոլիկներ) կրթութեանը նուիրած
 էր . իր աս փափուկ որդեկացը սրտին մէջ

ուրիշ դարու մը դաղտնիքը կարդացած
 էր : Անոնց անմեղութենէն անոնց կիր-
 քերն ուղղելու , և անոնց պարզմտութե-
 նէն՝ ան կիրքերուն առաջն առնելու ար-
 ուեստը սորված էր : Ան սիրալի ուսու-
 մը կանանց բնածին բարքն անոր ցուցը-
 նելով , անոր իմացուցած էր թէ հարկ էր
 զանոնք զօրացնել , քանզի տկար են , և
 լուսաւորել քանզի հզօր են : Այս
 պէս անոնց բնութիւնը դէմ յանդիման
 աեանելով , Ս. Ղ. Բանց դաստիարակութեան
 զիրքն յօրինեց , ան փափուկ , շնորհալի
 և հանճարեղ գիրքը՝ ուր առաքինութիւ-
 նը բարութեան պէս քաղցր է , և որոյ
 պարզ ու մայրենի վարդապետութիւ-
 նը ոչ այլ ինչ է , եթէ ոչ Յիսուս
 Քրիստոսի փոքր աղօց համար սերը :
 Գիրքն անման օրինակ է , քանզի մա-
 տենադրին հոգւոյն դրոշմն է . ճըշմար-
 տութեան և իմաստութեան դանձ ,
 մարդոց տրուած գործնական դաստիարա-
 կութեան ճառերուն գեղեցիկադոյնը ,
 էջիւի երկրորդ գիրքը ելլելէն ետքն ալ
 որ ամբողջ անոր (Ֆէնէյօնի գրքին)
 ծնունդն է :

Անդէն առաջին գլխէն Ֆէնէյօն իր
 սկզբունքը կը դնէ : Ֆիւրիին պատուի-
 րած ուսմանց վրայ՝ իսկոյն կը յաւելու-
 յոյն և հռոմէական պատմութիւնը , գաղ-
 ղիոյ պատմութիւնը , և հեռաւոր երկիր-
 ներուն ճշգիւ և խնամով գրուած պատ-
 մութիւնները : Լատին լեզուին ուսումն
 ալ աղջկանց պատշաճ կը տեսնէ , քանզի
 եկեղեցւոյ և աղօթից լեզու է . այսպէս
 կ'աղարտէ ան անիմաստ վարդապետու-
 թիւնը որ կ'ուզէ թէ Աստուծոյ մատուց-
 ուած աղօթք մը իմանալի չըլլայ այնպի-
 սի աղօթաւորին որ իր ուսումը հովերու-
 սի և Վիրգիլեայ մէջ ըրած չէ : Վեր-
 ջապէս Ֆէնէյօն ճարտարիտութեան ,
 զրադիտութեան և բանաստեղծութեան
 զիրքեր ևս կարդալու թոյլ կուտայ : Այս
 ամեն բաներն անոր բարի կ'երեւին քան-
 զի հոգւոյն մէջ առաքինութեան համար
 սաստիկ և հոյակապ զղացու մներ կը զար-

նուծիւնը կայ . և այս է նորեւրկ ամուս-
 նուծիւնը կալուածներու , տուներու և
 ստակի հետ կամուսնանան , ամուսինը
 կամ կողակիցն անկէջ իզատ (բառ տը
 սիւ լը մնառէ) կին մը կամ էրիկ կա-
 նուն : Անկէջ ՚ի զատ կրտսմ , վասն զի այս
 տեսակ ամուսնու թիւնը վաճառականական
 դաշինք մըն է , ընկերուծեան դաշնագիր
 մը , յորում մէկն իւր կալուածները կը
 գնէ , միւսն իր թեւերը աշխատելու հա-
 մար , մէկն ստակ կը բերէ , միւսն իր ճար-
 տարուծիւնը , մէկն իւր գեղեցկուծիւնը
 կը ծախէ , անոր՝ որ միայն ստակ ունի :
 մէկն իւր ծեր տարիքը և մալուծիւնները
 մէկ գումարով մը կը գնէ , և միւսը
 հաստատուն գնով մը (բռի ֆիքս)
 ինքզինքը կը նուիրէ : Ասոնք սովորաբար
 հետեւեալ կերպով կըլլան :

Բառասունեհինգ , յիսուն տարե-
 կան այրի կին մը , զարդարուն տուն մը ,
 պղտիկ խանութ մը , պարարտ հողեր , և
 ամբողջ հօտի մը տէր է : « Լաւ բան մըն
 է » . կըտեն հայրերն իրենց ոչոքուցը
 և այրին , որ գիտէ թէ ամուսին մը ծա-
 ապէ մը կամ՝ գրագրէ մը աւելի լաւ խը-
 նամք կունենայ գործոց՝ դուռը պահան-
 ջողաց կը բանայ : Ամէն տարեօք մարդիկ-
 ներ կուգան , բայց այս եկողներն աղ-
 քատ են : Ամէնէն լաւ ընդունելուծիւն
 գանտը քաննեհինգ տարեկան քաջա-
 բարոյ երիտասարդ մըն է , զոր իւր ծը-
 նողքը գրգելէ են ամուսնանալու : Այն
 ալ այս առարկուծիւնները կընէ :

— Բայց այդ այրին շատ մեծ ինծի
 համար :

— Աղէկն ալ այն է , տղաս , դուն
 անկէջ աւելի պիտի ապրիս , անոր հարս-
 տուծինը պիտի վայելես , հարուստ պիտի
 ըլլաս , ասանցմով ետքը ուրիշ կին մը
 կրնաս առնուլ :

— Ասով՝ կրնամ երկար ժամանակ
 թշուառ ըլլալ , ինծի հետ , իւր ծառային
 պէս պիտի վարուի , կարելի է որ զիս ար-
 համարհէ , երեսիս զարնէ թէ ինքն է
 որ զիս կը սնուցանէ :

— Պիտի համբերես : Երբոր ձեռքդ
 աղւոր դաշնագիր մը ունենաս , երբոր
 կինդ վաւերական գրով մը իւր հարս-
 տուծեանը մեծ մասը թեղի անցնէ , ա-
 սով ուրիշ չարիքներէ չե՞ս մխիթարուիլ :

— Չեմ կրնար սիրել զայն :

— Ինչ վնաս ունի , առաջ ամուս-
 նացիր , ետքը պիտի սիրես զայն թէ որ
 կրնաս : Քլլաւոր բանը անոր հարստու-
 թիւնն ունենալն է :

— Ես աւելի կը սիրեմ Մարգարիտը ,
 թէպէտ և բան մը չունի :

— Մարգարիտ , լաւ աղջիկ մըն է , սա-
 կայն սիրելիս՝ աղքատ է : Ուստի դուն այ-
 րիկն հետ պիտի ամուսնանաս : Եւ խեղճ
 տղան այրի կնոջ արծաթին և ազարա-
 կին հետ կամուսնանայ : Արծաթը և հո-
 ղերը բաւական չեն սիրտէն իրարու հետ
 կապելու :

Շատ չքշէր պատանին կիմանայ որ
 ինքզինքը տիրոջ մը տուեր է , թէ ամսա-
 կանով վարձկան մըն է , որ հրամայելու
 տեղ պէտք է որ հնազանդի , տարեաց
 անհամեմատուծիւնն իրեն հետ կը բե-
 րէ սովորուծեանց և բնուծեանց անհա-
 մեմատուծիւնը : Այն ատեն կերթայ և
 գինետան մէջ կը բ(թանայ) որպէս զի
 անական տհաճուծիւնը մտնայ : Երի-
 տասարդին մէկը , վախնալով մը կիմացը-
 նէ իւր ծնողացն ՚ի վաղուց հեռէ իւր
 սրտին մէջ արծարծած խորհուրդը . այ-
 սինքն Թագուհին հետ ամուսնանալ :

— Թագուհին , բարեսիրտ աղջիկ մըն
 է , առաքինի , քաղցրաբարոյ , պարկեշտ
 և աշխատասէր . ամուսինը երջանիկ պի-
 տի ընէ . ընտանիքը զեղին մէջ պատ-
 ուաւոր է , ինքքսան տարեկան է , ես
 քսան և հինգ . ուստի ամենայն կերպով
 պատշաճ ամուսնուծիւն մը պիտի ըլլայ ,
 և գիտեմ որ խնդիրքս պիտի չմերժէ :

Եարուստիւն :

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
 Ա. ՃԵՎԱՀԻՐՃԵԱՆ
 Ա. ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՏՊԱՐԱՆ